



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W 5-36

ԶՈՒՏ ԱՐԴԻՒԽԵԳԻ ԿԵՍՈՒ

Վերջին աղեսից վնասուածների օգսին

ՆՇՏԱՐ

ԺԱՀՐՈՑ

ՎԵՐՓԵՐ




Գի՞նն է 15 կլՊ.

891.99

Հ - 84

• 6 NOV 2011

Մ 536.



Վերջին աղետից վճառածների օգսին

(ԶՈՒՏ ԱՐԴԻԿԻՆԳԻ ԿԵՍԸ)

891.99

4-84

ՀՀ

ՆՇՏԱԲ

ԺԱՀԱՐՈՏ ՎԵՐՔԵՐ


(Պատկերներ)

1001
ՊՐԵ

Արտաստանական համապետություն



Հրատ. Եղբ. Բարուրեանների



Թիվ 15 1905
Տպարան „ՀԵՐԱԿԻՍ“ Մաղարեան փող. 15.
(128)

Дозволено цензурою 22 Августа 1905 г. Тифлисъ.

ՆՈՐ ՏԱՐԻ—ՆՈՐ ԿԵԱՆՔ

Կաղանդի երեկոն էր:

Աղքատ կերպով կահաւորւած փոքրիկ սենեակը հաղիւ լուսաւորւում էր պատից կախւած մի հնացած լամպի թոյլ լոյսով, որ երբեմն բարձրանում էր ու ծխում, երբեմն նըւազելով հանգչելուն էր մօտենում, երբեմն էլ իր տաղակաւի տղղոցով կարծես գանգատում էր իր անինամ դրութեան մասին: Հին ժանգոտած վառարանը վաղուց լափել էր ցախի մի քանի կտորները, որ այնպէս դողդողալով ու ժլատութեամբ գարսել էր հոգատար տանտիկինը: Այժմ նա սառել էր: Ցուրտ էր և սենեակում, ուր այդ ժամանակ գըտընում էին չորս կենդանի արարածներ—մի նորահարս տիկին—նատալիան—ու իր երեք երեխաները, որոնցից երկուսն աղջիկ էին, մէկը տղայ:

Թէև գիշերից բաւական անցել էր, սակայն նրանք, հակառակ իրանց ամենօրեայ սովորութեան, գեռ չէին պարկում քնելու: Շուտ քնելու սովոր երեխաները տրորում էին իրանց ծանրացած աշքերը և աշխատում էին արթուն մալ. Հը որ շուտով փողոցից պիտի վերադառնար հայրիկը և նըրանց համար միրգ լերէր, որը պիտի լինէր ոչ պակաս քան եօթ տեսակ միմեանց խառնած: Նրանք պիտի ջոկէին միեւանցից և ի հարկէ անուշ անէին. որքան ցանկալի էր այդ ըոպէն խեղճ երեխաների համար, որոնք մանաւանդ վերջին տարիները միշտ աւելի ու աւելի զուրկ էին ապրում. և նրանք մտածելով այդ չըտեսնւած քաղցր մրգերի մասին՝ կուլ էին տալիս թուքները:

Այդ օրը ճաշից յետոյ Պետրոսը —այդպէս էր հայրիկը անունը —տնից դուրս գնալիս երեխաները յիշեցրել էին նըրան կաղանդի մասին և նա խոստացել էր երեկոյեան անպատճառ միրգ բերելու նրանց համար. իսկ նրանցից թագուն, դիմելով կնոջը, ասել էր.

—Երեխաներին գոնէ այսօր պէտք է փոքր ինչ ուրախացնել, նրանք միրգ են խնդրում ինձանից, իսկ ես ինչով գնեմ: Երեկ ծախեցի մեր մի հատիկ կապերաց տասն րուրով, իսկ այսօր մի կոպէկ անգամ չէ մնացել գրավանում:

—Անրախտ, գիտեմ, այն էլ թղթախաղում տարւածկը լինենք: Դու չես խղճում ոչ քեզ, ոչ էլ այս խեղճ երեխաներին, որոնց աշխարհ ես բերել զրկանքների մէջ տանջելու համար: Անսիրտ, երբ պիտի ձեռք վերցնես դրանից. չէ՞ որ մենք արդէն բոլորովին աղքատացել ենք:

Սակայն եղածն անցած էր. մարդը շատ անգամ էր լսել կնոջից այդպիսի յանդիմանութիւններ և անտարբեր մնացել: Թղթախաղի ախտը արդէն խորին արմատներ էր ձգել նրա սրտի մէջ և իր ճիրաններում բոլորովին ստրկացրել նրան: Այդ օրն էլ կինը ստիպւած եղաւ տալ նրան իր միակ մատանին զրաւ դնելու, որ գոնէ նրա փողով կարողանար փոքր ինչ միրգ գնել երեխաներին ուրախացնելու համար: Պետրոսը գնացել էր, բայց հակառակ իր խոստման՝ այսքան ժամանակ գեր չէր վերադարձել:

Երեխաների համբերութիւնն արդէն հատնում էր:

—Ե՞րբ կը գայ հայրիկը, ինչու է այսքան ուշանում — ասում էր փոքրիկ Հեղուշը, որ հազիւ եօթ տարեկան էր:

—Չէ՞ որ նա խոստացաւ շուտ վերադառնալ և մեզ համար միրգ բերել — շարունակեց նրա խօսքը Վարդիկը, որ սրանից երեք տարով մեծ էր:

—Մայրիկ, չըլինի՞ այս անգամ ես մեզ խարեց հայրիկը, ինչպէս նա անում է շատ անգամ, երբ մեզ ընծաներ է խոստանում, բայց ոչինչ չէ բերում — ասաց համարձակ Աշոտը, որն ամենից մեծն էր:

Մայրը չըգիտէր ինչ պատասխանել, սակայն նեղ դրութիւնից հանեցին նրան դարձեալ երեխաները:

—Մայրիկ, ինչու ամեն օր կաղանդ չէ լինում — դարձեալ հարցրեց Հեղուշը:

—Որովհետեւ չի կարելի ամեն օր միրգ ուտել, ատամներդ կըցաւն, պատասխանեց սրախօս Աշոտը:

—Իսկ կաղանդին ինչ են անում, մայրիկ, հարցրեց Վարդիկը:

—Մտածում են անցած տարում իրանց բոլոր արածների մասին, հաշիւ են տեսնում թէ որքան լաւ ու վատ բաներ են արել և խոստանում են լամբրը շարունակել, իսկ վատերը չըլրկնել, մտարերում են թէ որքան ուրախութիւններ կամ արտմութիւններ են տեսել և համեմատում են այդ տարին անցած նախկին տարիների հետ — պատասխանեց մայրը:

—Իսկ այդ ինչու համար է, — հարցրին երեխաները միաձայն:

—Որ իմանան թէ այժմ աւելի բախտաւո՞ր են իրանք, թէ՞ դժբախտ:

—Եկէք, մենք ևս հաշիւ տեսնենք, — ասաց Աշոտը: — Նախդնական ասաւ, Հեղուշ, ինչ ես արել այս տարի, երկու տիկին ունէիր, մէկը կըցրիկը, կոտրեցիր մեր սեղանի հայելին. Քեզ ուսումնաբան տւին, մի ամիս միայն մնացիր...

—Ես ամենքից լաւ էի սովորում, բայց ինձ գուրս արին, որովհետեւ հայրիկը չըկճարեց թոշակը — խռոված պաշտպանեց ինքն իրան Հեղուշը:

—Լաւ, բաւական է, քեզ միայն մի բուռ միրգ պէտք է տալ, — վճռեց Աշոտը: — Այժմ դնւ, Վարդիկ, անցեալ տարի աւելի լաւ էիր սովորում դասերգ, իսկ այս տարի վարժութեղի շարունակ գանգատուում էին և դու մնացիր դասարանում. հայրիկը երկու անգամ բարկացաւ քեզ վրայ և ոչ մի նոր շոր չառաւ քեզ համար, որովհետեւ ծոյլ աղջիկ ես. քեզ միրգ չըպէտք է տալ:

—Ես չըկարողացայ փոխւել, որովհետեւ հայրիկը ինձ համար դասագրեր չառաւ, շարունակ էսօր-էզուց ասաց և չառաւ, — արդարացաւ Վարդիկը:

—Դէ լաւ, որ այդպէս է, քեզ կէս բուռ միրգ կըտանք: — Իսկ դու, Աշոտ, ինչ լաւ բան ես արել այս տարի, —

բարկացած հարցը հեղուշը, որ չէր կարողանում համբերել, թէ ինչու հայրիկի բերած մրգերից միայն մի բուռպէտք է տային իրան:

—Հինգ անգամ կուել է փողոցում. երկու անգամ ուրիշների քիթն է արնացրել. մի անգամ իր գլուխն են պատռել. երեք անգամ մայրիկի մազերն է քաշել և նրան՝ լացացրել, տասն անգամ ինձ է ծեծել, քսան անգամ քեզ, հեղուշ, վեց անգամ հայրիկն է պատժել նրան ու անհաց թողել. նա կոտրել է սեղանի լամպը, լուսամուտի ապակիները. վայր է ձգել եփող հեշտաեռը, թափել է սեղանի ամանները. վանդել է արհեստաւորաց դպրոցից...

Դեռ երկար պիտի շարունակէր վարդիկը, բայց այդտեղ Աշոտը պատճառ գտաւ նրան ընդհատելու:

—Որովհետև ընկերս կոտրեց մի թանգազին մեքենայ, ինձ վրայ շառ ձգեց, իսկ հայրիկս չուզեցաւ վճարել կոտրած մեքենայի արժէքը:

—Դէ որ այդպէս է, քեզ էլ, Աշոտ, երկու հատ չամիչ կըտանք բոլոր մրգերից,—հեղինակաւոր կերպով որոշեց Հեղուշը:

—Իսկ մացած բոլոր միրգն ում պիտի մնայ, —հեղուշ թեամբ հարցը հեղուշը:

—Հայրիկին ու մայրիկին,—իսկոյն վրայ բերեց վարդիկը:

—Իսկ նրանք ի՞նչ են արել այս տարի—հարցը հեղուշը:

—Այդ քո գործը չէ. սուս կաց, —լոցը նրան Աշոտը:

«Ի՞նչ են արել հայրիկն ու մայրիկն այս տարի», այս խօսքերը ցնցեցին մտքերի մէջ խորասուզւած Նատալիային և նա մտքումը ասում էր.

—Հայրիկն այս տարի թղթախաղի սեղանի վրայ դրեց իր ունեցած վերջին կոպէկն էլ և դրանով չըրաւականացած, ծախեց տասն պղինձներն ու կապերտները. նա իր անմիտ վարմունքով թշւառացրեց ամենիս: Իսկ մայրիկը ստիպւած եղաւ ուրիշների գուանը ծառայութիւն անել, չարչարւել, տանջւել և այսօր վաճառելու ուղարկեց իր նշանի մատանին:

Երեխաները չընկատեցին թէ ինչպէս նրա աչքերից գլուխուցին արտասուքի խոշոր կաթիներ, որ նա զգուշութեամբ թագցրեց նրանցից:

* *

Կէս զիշերը մօտեցել էր, իսկ Պետրոսը դեռ չըկար: Քունը յաղթեց երեխաներին և նրանք պարկեցին խօսք տալով առաւտահան խիստ վաղ զարթնել, ջնորհաւորել հայրիկի նոր տարին և ստանալ այն ընծաները, որ նա անշուշտ պիտի բերէ:

Զէր քնում միայն Նատալիան: Փոքրիկ սեղանին կըրթնած և իր այրուղ ճակատը ձեռքերի մէջ առած, նա խորասուզւել էր տիսուր մտքերի ովկիանոսի մէջ: Տիսուր էին նրա մտքերը. այս, շատ տիսուր և մինչև անգամ յուսահատական: Նա համեմատում էր այս տարին անցած տարիների հետ և ի՞նչ էր գտնում: Զէ որ առաջ իրանց առունը լի էր ամեն բարութեամբ. որքան երջանիկ էին նրանք հէնց միերկու տարի առաջ: Պետրոսը Ժրաջանութեամբ հետեւում էր իր արհեստին. նա անսահման սիրում էր իր կնոջն ու երեխաներին. նրանք ապրում էին առանց կարիքի, խաղաղ ու երջանիկ, նրանք մինչև անգամ մի վոքրիկ գրամագլուխ էլ էին տնտեսել սկ օրւայ համար, որն, աւաղ, շատ շուտ վրայ հասաւ: Անհաւատարիմ բախտը շրջեց իր անիւը և թշւառութիւնը իր սկ թւերը տարածելով այդ փոքրիկ ընտանիքի վրայ, աշխատում էր բոլորովին խաւարեցնել նրա երեմն այնպէս վառ արեւը: Սակայն ով էր այս բոլոր անբախտութիւնների պատճառը.—Պետրոսը, իր անհետատեսութեամբ: Նա մոռացաւ, որ ինքը ամուսին է և հայր. մոռացաւ, թէ ինչ մեծ պարտքեր ունի իր կնոջ ու երեխաների վերաբերմամբ. մոռացաւ, որ իր ձեռքումն է գտնուում նըրանց ամբողջ պապան ու բախտը: Նա խարեց անսիրտ թղթամոլ մի քանի ծանօթների խօսքերից և թողնելով իր համեստ գործը, ուղեցաւ հեշտութեամբ միանգամից, թէ և անարդար ճանապարհով, հարստանալ և անձնատուր լինելով այն անիծեալ թղթախաղին, բոլորովին տարեց նրան: Ո՛չ կնոջ աղերսը, ոչ բարեկամների յանդիմանութիւնը ոչինչ չարին նրան ուղիղ ճանապարհի վրայ բերելու և նա վատնե-

լով իրանց ամբողջ գոյքը, ահա այսօր էլ ծախելու տարաւ այն միակ մատանին, որով երբեմն նա սիրոյ դաշն էր կապել իր կողջ հետ: Նա տարաւ մատանին նրա գնով միրդ բերելու երեխաների համար և մինչև այժմ չըվերադարձաւ. անշուշտ այժմ դարձեալ նա թուղթ է խաղում: Աստւած, Երբ պիտի վերջանայ անտանելի դրութիւնը: Ամենքից յարգւած էին նրանք մի ժամանակ, իսկ այժմ մոռացւած, մինչև անդամ արհամարհւած: Շատերը խոդում են այժմ նրանց վրայ, ոմանք անսիրտ կերպով ծաղրում են, ոմանք էլ իրանց գիշատիչ աչքերն են տնկել զեղեցիկ նատալիայի վըրայ... Անխիղճ մարդիկ. նրանք աշխատում են օգտւել նըրանց թշւառ դրութիւնից և ուզում են փողով գնել նրա սէրը և գգւանքը, որ անմիտ Պետրոսը անուշադրութեան է մատնել... Նրանք ուզում են ցեխի մէջ թաղել նրա պատիւը... Հէնց այսօր չէր, որ Շողերը—այն քաւթառ պառաւը —կեղծ կարեկցութեամբ ասել էր նրան:

—Այդ ինչ անսատւած մարդ ունիս, նատո ջան. ի՞նչու է քեզ թշւառացնում. չէ որ դու ջանիլ կին ես, նա քեզ վարդի պէս պէտք է պահի, գուրգուրի, զարդարի. այդ ի՞նչ է ըստ դրութիւնը: Անիծւի՞ այդպիսի մարդը, որ կնոջ մեղքի տակ կըմտնի ու յետոյ նրան այլպէս կանբախտացնի. ի՞նչու դու էլ գոնէ չես մտածում քո մասին:

—Ի՞նչ անեմ, տատի, —ասել էր ինը, —ամեն ճնար գործ դրի, ոչինչ չի օգնում, նա բոլորովին տարւել է, խելը կորցրել...

—Դու էլ նրա աչքը հանիր ու...

Այդ խօսքերն ասելիս պառաւի աչքերում փայլել էր նենդաւոր կարեկցութեան թունալից արտայայտութիւնը: Նատալիան սարսափել էր նրա չարախորհուրդ սոսկալի հայեցքից և իսկոյն դուրս արել նրան իր տնից: Իսկ այժմ գիշերային լոռւթեան այդ տարաժամ խորհրդաւոր բոպէին կարծես նրա ականջում դարձեալ հնչում էին պառաւի այն խօսքերը...

Երեխաները վաղուց ընկել էին. արդէն լսւում էր նըրանց թեթև խորդոցը: Աշոտը իր գլուխը բոլորովին վերմակի տակ էր թագցրել, իսկ երկու փոքրիկ աղջիկները շա-

բունակ շարժւում էին, քնած տեղը խօսում, երեխ կաղանդի մրգերն էին երազում: Վերջապէս Հեղուշը ձեռքի շարժումով մի կողմ ձգեց վերմակը և բաց արեց իր մանկական քնըոյշ կուրծքը:

Մայրը նորից ծածկեց նրան և, մի բոպէ աչքերը սեւուելով իր քնած զաւակների վրայ, խանդաղատանքով մրմնջաց.

—Խղճուկ ղաւակներս, ի՞նչով էք մեղաւոր, որ անբախտութեան մէջ էք տանջւում: Ա՛խ, Աստւած, գոնէ սըրանց խղճա: Անդութ Պետրոս, պարտական մնաս սրանց:

Սրտասուքի հետ միասին նա կուլ տւեց իր վերջին խօսքերը և նորից իր առաջւայ տեղը նստելով, աչքերը յառեց դէպի պատից կախւած լամպան, որ մօտ էր հանգչելուն:

Յանկարծ քնից զարթնեց Աշոտը և նստելով իր տեղում՝ հարցրեց.

—Մայրիկ, ի՞նչու չես բնել հայրիկը դեռ չի եկել: Ակ ի՞նչու է այսքան ուշանում:

—Զըգիտեմ, ուշանում է...—հեկեկաց մայրը:

—Մայրիկ, նոր երազում տեսայ հայրիկին. մրգավաճառի հետ կուռում էր. նրանք միմեանց հայհոյեցին և մրգավաճառը խփելով հայրիկի գլխին, արիւնլւայ արեց նրան: Մայրիկ, քունս չէ տանում. ես պէտք է գնամ հայրիկին կանչելու, նա անշուշտ մօտիկ Փ. հիւրանոցում կըլինի. չէ որ ամեն երեկոյ այնտեղ է գնում թուղթ խաղալու: Ես չեմ ուշանալ, մայրիկ, միայն թնդ, որ գնամ հայրիկին կանչեմ:

Մայրն այս անգամ չընակառակեց: Աշոտն իսկոյն հագաւ շորերը. մայրը ևս իր շալով կըկին ամուր փաթաթեց նրան և նա շտապով դուրս գնաց տնից:

* *

Առնելով կնոջ ձեռքից մատանին, Պետրոսը, փոխանակ շուկայի, գնաց ուղիղ Փ. հիւրանոցը, որտեղ արդէն սպասում էին նրան իր մտերիմ, սակայն իսկապէս նենդաւոր, ընկերները: Նախընթաց օրը նրանք տարել էին Պետրոսից նրա ունեցած վերջին տասն բուրքին և սա այսօր շտապով գնում էր նրանցից յետ տանելու իր տարւածը և դեռ մի այնքան էլ աւելի շահելու:

Իրիկնապահից չորս ընկերները նստել էին կանաչ սեղանի շուրջը և ահա շուտով կէս զիշեր կը դառնար, իսկ նրանք փոխանակ դադարելու, աւելի ու աւելի էին գրգռուում: Սկզբում բախտը ժպտացել էր Պետրոսին և նա տարել էր, սակայն, քիչով չըթաւականանալով, նա ագահաբար աւելի էր տաքացել և գդբախտաբար այս անգամ թուղթը յանկարծ սկսել էր թարսւել և նա արագութեամբ տարուում էր իր բոլոր տարածները: Վերջապէս բոլորը տարւելով, նա այս անգամ սեղանի վրայ դրեց իր կնոջ մատանին ու սասց:

—Քառասուն բուրլի եմ տեղ սրան, բայց քսան մանէթի եմ բանի դնում, համաձայն էք, ընկերներ:

—Տասը բուրլուց աւելի չարժէ—հակածառեց կողքի ընկերը: Պետրոսը չըհամաձայնեց 40 լուրլիքանոց իրը 10 բուրլի գնահատելուն. միջամտեցին միւս ընկերները և բանը վերջացրին 15 բուրլով: Պետրոսը բաժանեց թուղթը:

—Բանի,—ասաց կողքի ընկերը և իր ձեռքի 3 թուղթը փոեց մատանու վրայ: Պետրոսը ևս 1 թուղթ հանեց իր ձեռքի դաստից և զայրոյթով տեսաւ, որ ինքը տարւել է: Մի վայրկեանում տանող ընկերը սեղանի վրայից յափշտակեց մատանին ու զրեց իր մատը:

Պատի ժամացոյցը խփեց 12-ը: Հարեան դահլիճից լըսւեցաւ բազմաթիւ ձայների միահամուռ աղաղակը:

—Ենորհաւո՞ր նոր տարի:

—Այն, շնորհաւոր նոր տարի, կրկնեց տանող ընկերը և կանգնեց.—գնամ շնորհաւորեմ իմ Սոնիչկիս նոր տարին և ընծայեմ նրան այս մատանին: Վաղուց է նա ինձ սպասում. հիմա անշուշտ բարկացած կըլինի ինձ վրայ, բայց, ոչինչ, երբ այս ընծան ստանայ, յուսով եմ չի մերժիլ ինձ իր թանկագին համբոյրը...

Պետրոսը ևս տեղից կանգնեց ու երերալով դուրս գընաց հիւրանոցից: Դրսի ցուրտ օգը գիպչելով նրա բորլուք և ձակատին, ցրեց նրա աչքերի առաջ կուտակւած մասիսուզը և նա այժմ պարտ տեսաւ իր առաջ կանգնած մերկ զարհուրելի իրականութիւնը: Նա նոր յիշեց երեխաներին տւած իր խոստումը, ձեռքերն արագութեամբ գրպանները

տարաւ, սակայն նրանք բոլորովին դատարկ էին: Պետրոսի մարմնով մի մահաբեր դող անցաւ: Ի՞նչ անէ նա այժմ, ինչպէս տուն գնայ և ի՞նչ երեսով նայէ իր կնոջ ու երեխաների երեսին կամ ի՞նչ պատասխանի նրանց հարցերին: Պետրոսը այդ ժամանակ միայն զգաց իր գարշելի արաբքի ամբողջ ամօթն ու զարհուրանքը: Նա ձեռքը մեքենայաբար տարաւ իր ծոցի գրպանը և այդ ժամանտկ նրա գլխում մի փրկարար միտք ծագեց: Միտք, որ յաճախ էր փայլել նրա ուղեղում, բայց որի վճիռը նա միշտ յետաձգել էր: Նա այժմ զգաց, որ հասել է գրա վճուելու րոպէն:

Թղթամոլ մարդիկ առ հասարակ սիրում են միշտ ատըրձանակ ունենալ իրանց գրպանում, որ յամենայն դէպս խիստ յաճախ կարող է պէտք գալ նրանց թէ հակառակորդներին և թէ երբեմն էլ իրանց սպանելու համար: Այդպէս էր և Պետրոսը: Նա ամեն ինչ դրեց թղթախաղի սեղանի վրայ բացի իր ատըրձանակից, որ միշտ նրա անրաժան ընկերն էր և որին նա ամեն բանից աւելի էր գնահատում:

—Երբ որ ամեն ինչ կըկորցնեմ և ամենքից արհամարւած կըլինեմ, սա միայն ինձ կազատէ նախատիսքից, —մտածում էր նա ինքն իրան և ատըրձանակն աւելի ամուր թագնում իր գրպանում: Իսկ այժմ նրա գուշակութիւնը կատարւել էր և այդ տագնապալից բոպէում նա վերջապէս վճուեց, որ արդէն հասել է իր կեանքին վերջ տալու ժամանակը: Սակայն տեղը փոքր ինչ անյարմար էր. և նա փոխանակ ուղիղ փողոցով գէպի տուն գնալու, թեքւեց գէպի մի կողմանակի սեղ փողոց և այնտեղ մի մութ անկիւնուժ կանդ առնելով, ձեռքը տարաւ գէպի գրպանը, հանեց ատըրձանակը և մօտեցրեց քունքին:

—Հայրիկ, հայրիկ.—Ճայն տեսեց նրա յետկից մի մանկական քնքոյց ձայն.—Ռէր ես գնում այդ փողոցով:

Պետրոսը կայծակնահար եղաւ. նա ամբողջ մարմնով ցնցւեց և ինչպէս մի ոճքագործ կախ ձգեց իր գլուխը: Նրա առաջ ցրտից գողգողալով կանգնած էր իր որդին՝ Աշոտը, որ Գ. հիւրանոցում չըգտնելով նրան, եկել էր փողոցում վնտուելու:

—Ես... ես...—կմկմաց հայրը և նրա լեզուն կապւեց:

Այդ բողէին նա չըկարողացաւ ստել, իսկ ճիշտն ասել նոյնպէս չէր համարձակւում. նա հազիւ միայն կարողացել էր նորից թագժնել ատրճանակն իր գրպանում:

— Գիտեմ, հայրիկ, այդ կողմով գու գնում ես մրգավաճառի խանութը մեղ համար միրդ գնելու. այնպէս չէ, հայրիկ, ասա, լաւ չիմացմի:

— Եյն, գաւակս, գնում եմ այնտեղ...

Եւ նրանք մտնելով մօտակայ խանութը՝ գնեցին մըրգեր, իսկ փողը վճարելու ժամանակ Պետրոսն իր որդուց ծածուկ մրգավաճառին ծախեց իր ատրճանակը:

**

Առաւտեան երեխաները զարթնելով շատ ուրախացան տեսնելով, որ հայրիկը վերադարձել է բերելով իր հետ ամեն տեսակ մրգեր: Իսկ երբ մի քանի բողէով Պետրոսն ու Նատալիան մենակ էին սենեակում, նա գուրգուրելով իր թանգագին կնոջը և համբուրելով նրա ճակատն, ասաց.

— Մինչև այժմ ես ապրեցի միայն ինձ համար, ըոլորովին մոռանալով քեզ ու զաւակներիս և այդպիսով ես տանջեցի ու թշւառացրի ձեղ, սակայն ինքս էլ թշւառացայ և արդէն վճռել էի վերջ տալ կեանքիս, միայն երեխայիս հրեշտակային ձայնը սթափեցրեց ինձ, նա յիշեցրեց ինձ իմ մոռացած պարտքս և ես վճռեցի այսուհետեւ ապրել միայն ձեղ համար, մինչև այժմ ես մեռած էի ձեղ համար և ապրում էի միայն ինձ համար, իսկ այսուհետեւ հակառակն է լինելու: Թող կորչի այս անմիտ կեանքը. այսուհետեւ արհեստ և աշխատանք, այսուհետեւ միայն հալմա հաց և ընտանիք:

Նատալիան երջանիկ էր. ուրախութեան արցունքներն առատորէն գլորւում էին նրա աչքերից և նա զգում էր որ նոր տարին ծագում է իրանց համար եւ բերում իր նիս նոր, երջանիկ կեանքի արշալոյս:

Յ Ա. Ր Ո Ւ Ի Թ Ի Ռ Ի Ն Ա Ռ Ա Ի

Մ եծ պասի վերջին օրը մթնում էր արդէն:

Ս. Կուսաւորիչ եկեղեցում երեկոյեան ճրագալոյցի պատարագն սկսւել էր: Աղօթողների ահազին բազմութիւնը լցրել էր ընդարձակ եկեղեցին. ասեղ ձգելու տեղ չէր մնացել և դեռ շարունակ գոներից մարդիկ էին ներս մտնում, կամաց հրհրում միմեանց և աշխատում տեղաւորելու: Դպիրների ու սարկաւագների ձայներին խառնում էին ծերունի ջերմեռանդ աղօթողների մրմունջներն ու հառաչանքները, կանանց անվերջ քչփչոցը, երեխաների ճիշերը, ջահիլ մարդկանց խօսակցութիւնները: Մարդիկ շոգից խեղուում էին, քրտինքը առատ զլորւում էր նրանց ճակատներից: Արտաշընչած թանձր օգն ու խոնաւ գլորշիները, միանալով մոմերի սև ծխի և բուրվառներից քուլայ-քուլայ բարձրացող խնկահոտ մուխի հետ, թանձր ամպի պէս լցնում էին եկեղեցու կամարները և նսեմացնում բարձրում ջահերի վրայ վառուղ մոմերի լոյսը: Սեղանը ևս ողողւած էր այդ թանձր ամպով, որի միջից հազիւ երեսում էր պատարագիչ քահանան և այդ զրութեան մէջ նրա խօսքերը լսում էին մի տեսակ խորհրդաւոր ու մարդկանց մէջ հաւատ ներշնչող եղանակով: Շատերը, որոնք ամբողջ տարին եկեղեցու երես չեն տեսնում, այդ օրը բարեհաճել էին գալ Աստուծոյ տունը, արգեօք լսելու Փրկչի ո. յարութեան աւետիքը և գէթ մի քանի բողէով հանգիստ տալու հոգսերով ու չարչարանքներով ծանրաբեռնւած իրանց խղճին, թէ լոկ հանդիսատես լինելու մեծ բազմութեանը:

Այդ վերջին տեսակի անձնաւորութիւններից էր այդ օրւայ ժամաւորներից մէկը ևս—յայտնի Սարգիս աղէն: Նա առհասարակ եկեղեցի գնալու սովորութիւն չունէր: Բազմաթիւ խառն առևտրական ու դատաստանական գործերը միշտ խլում էին նրա ամբողջ ժամանակը և նա անվերջ զբաղւած էր իր մուրհակներով, տոկոսների հաշւարարութեամբ, կատարուան թերթերով ու անուրդներով: Ի՞նչ օգուտ որ նա մեծ փող ունէր. չ՞ որ հէնց դրանում էլ կայանում էին նըրա օրնիբուն չարչարանքները, անհանգիստ վազվացն ու քաշկուտիւը: Սակայն դրանց համար նա ամեննեին չէր նեղանում կամ գանգատւում. այդ նրա սիրած ու միակ արհեստն էր: Նա մի օր նոտարի մօտ մուրհակներ էր զրել տալիս իր փողերից տոկոսով տալու. հետեւալ օրը բողոքում էր պայմանաժամը լրացած մուրհակների համար, երբորդ օրը գանգատներ էր տալիս դատարանում, չորրորդ օրը անուրդով ծախում իր պարտապանների կայքերը: Նա միայն մի տեսակ ապրանքի—փողի առևտուրով էր զբաղւած: Նտ վաշխառու էր այդ խօսքի ամենալայն մտքով և վաշխառուի տիպարը ներկայացնում էր ամենակատարեալ կերպով: Նա խիստ կատարելազորձել էր միամիտ զոհեր գտնելու, նրանց խարելու և իր ցանցերի մէջ յաւիտեան կաշկանդելու հաստատ ու ապահով ձեւերը: Օրէնքն իր բոլոր խառնութիւններով անզօր էր զսպելու այդ մարդ-գաղանին, որն իր սատանայական հնարազիտութեամբ միշտ կարողանում էր ազատել ամեն պատժից: Վաղուց հանգել էր նրա մէջ կարելցութեան ու գթութեան վերջին կայծն անզամ և նա իր դիւական հրճանքը գտնում էր իր զոհերի անզօր տանջանքների, լաց ու հառաչանքի, թշւառութեան ու արտասուրքների մէջ միայն: Նա չըգիտէր թէ ինչ է խոդալ թշւառին, օգնել թոյլին, ողորմել աղքատին: այդպիսի բան նրան անհասկանալի էին: Քանի տուն էր քանդել նա, քանիսի ընտանեկան բարւոք դրութիւնը խորտակել: Քանի գոհ ու բախտաւոր մարդկանց օրական հացի կարօտ դարձել իր անխիղճ ու անսպառ տոկոսներով: Նա խլում էր իր պարտապանների ամբողջ արիւն-բրտինք աշխատանքը, նըրանց շարժական ու անշարժ կայքերը, նրանց կանանց սի-

րած զարդերը, իսկ նրա պահանջը դեռ չէր վերջանում: Բչ ոքի նա չէր ինայում, այդ պատճառով ոչ ոք էլ նրան չէր սիրում, ամենքի ատելին էր նա: Սակայն նա ինքը ևս բաւականին պատժւած էր: ուրիշներին տանջելու համար, ինքը ևս պարտաւոր էր թէկուզ ակամայից տանջւել. և նա անց էր կացնում իր օրերը միշտ անհանգիստ, բարկացած, մըտազրադ ու վրդովլած դրութեան մէջ: Ուրիշներին շարունակ բռունցքներ հասցնողը ցաւեցնում է իր ձեռքը: այդպէս էր և անգութ Սարգիս աղէն:

Այդ օրը ևս նրա հանգստութիւնը վրդովլած էր: Թէն նա այժմ եկեղեցումն էր գտնում, սակայն դա կարծես միայն նրա համար էր, որ այդ օրն էլ խարէր Աստծուն, ինչպէս միշտ խաբում էր մարդկանց: Կատարւում էր պատարագի սրբազն արարողութիւնը, իսկ նա՝ Սարգիս աղէն—մտքով գտնում էր եկեղեցուց շատ հեռու իր փողերի, մուրհակների ու տոկոսների աշխարհում: Նա չէր կարողանում գէթ մի րոպէ իր միտքը կենդրոնացնել աղօթքների վրայ: Նրա ուշը դուրս էր ոլանում: Եկեղեցում կանգնած նա չէր կարողանում մոռանալ այդ օրը իր գլխով անցած մի դէպքը, որին ամեն անզամ մտարեկելիս բարկութիւնից ու յուզմունքից դողում էր: Նրա պարտապանը—փոքրիկ խանութպան Յովսէփը—երկու ամիս շարունակ խարխարել էր նրան և չէր վճարել իր 300 բուրլի պարտքը, որը դատարանով Սարգիս աղէն վճռել էր տւել նրա վրայ և գուրս բերել կատարողական թերթը: Այդքան երկար նա ոչոքի ժամանակ չէր տըւել, բայց այս տնգամ զիջանելով ուրիշների ինքրին՝ չէր նեղացրել Յովսէփին, սպասելով, որ նա շուտով կը վճարի իր պարտքը: Խսկ նա մինչկ այդ օրը գեռ չէր վճարել: Ճիշտ է, Յովսէփը թէ նիւթական և թէ ընտանեկան ձախորդութիւնների պատճառով ամեն կողմից խիստ նեղ դրութեան մէջ էր գտնում, սակայն Սարգիս աղէն այդ չէր հարցնում: Նրան ինչ. միթէ Յովսէփի գժբախառութեան մէջ ինքը ամենափոքը մեղք անզամ ունի: Նա փող է տւել տոկոսով և իշխաւունք ունի ժամանակին պահանջելու: Յովսէփի պարտքն է վճարելու հոգսը քաշել, որտեղից և ինչպէս ուզում է թող ձարէ փողը:

Այդ օրը վերջապէս Սարգիս աղի համբերութիւնը հատել էր: Նա դիմել էր դատական պրիստաւին և նրան տարել էր վեր գրել տալու Յովսէփի փոքրիկ խանութի ապրանքը, սակայն նրանց գնալուց առաջ իր թշնամիները յայտնել էին Յովսէփին այդ բանը և սա, ամօթից ու խայտառակութիւնից փախչելու համար, փակել էր խանութը և գնացել տուն։ Զայրացած Սարգիս աղէն չէր ուզեցել գործը այլ ևս յետաձգել և Յովսէփին աւելի պատժած լինելու համար պրիստաւին տարել էր նրա տան կայքը գրել տալու։ Տուն մտնելով նա չէր հաւատացել իր աշքերին, տեսնելով այնպիսի աղքատութիւն, որ նա ամենակին չէր կարծում։ Յովսէփի տանը կային միայն ամենաանհրաժեշտ կարասիքները և շորերը, որոնց պրիստաւը իրաւոնք չունէր ցուցակագրելու։ Ամօթահար ու վշտացած Յովսէփը մի անգամ ևս փորձել էր արդարանալ, ցոյց տալով իր թշւառ դրութիւնը։ Նրա կինը մի անկիւնում կամաց լալիս էր չըդիմանալով այդ նախատինքին։ Երկու փոքրիկ երեխաները սարսափած թափնուում էին նրա փեշերի տակ, իսկ մեծ որդին՝ Միսակը — հազիւ տասներկու տարեկան մի տղայ — հաւաքել էր իր գրեքերը և ամուր բռնել իր ձեռքերում, գուցէ վախսալով, որ անգութ պարտատէրը այն ևս կարող է խլել իրանցից։

Սարգիս աղէն տեսել էր այդ ամենը և, փոխանակ խղճալու, աւելի իխսու էր զայրացել։ Նրա խոփը քարին էր դիպել և նա ստիպւած էր դատարկաձեռն վերադառնալու։ Նրան թւացել էր, որ խորամանկ Յովսէփը նախօրօք թագցրել է իր տան կայքերը և երբ սա ուզեցել էր նորից խընդրել ժամանակ տալու իրան մինչեւ կըկարողանար աշխատել ու վճարել իր պարտքը, նա կատաղած գուացել էր։

— Տօ, ստախօս, մինչև ե՞րբ պէտք է խաբես։ Փնդս տուր, փնդս։ Այդպիսի խօսքեր շատ եմ լսել։ Իսկ եթէ չես տալ, իմացիր որ երեխաներդ ծախել կըտամ։ Կարծում ես իմ փողս հեշշա կըմարսես։ Դու իմ ձեռքից երբէք չես պրծնիր։

Սարսափած երեխաները այդ խօսքերի վրայ ճիչ էին բարձրացրել, արտաստող տանտիկինը աւելի ամուր էր կըծկւել տան անկիւնում։ Ճարդւած ու յուսահատ Յովսէփը կարկամել էր, քարացել ու կախ ձգել գլուխը։ Իսկ Սարգիս ա-

դէն այլ ևս աւելորդ համարելով իրանց մնալը այդ խեղճերի մօտ, որոնցից գոնէ այժմ նա ոչինչ չէր կարող ստանալ, իր պրիստաւի հետ միասին գուրս էր գնացել այդ տնից։

Նա այդ օրը երեկոյեան հաղորդելու էր և դրա համար շտապիկ էր դէպի եկեղեցի։ Պատարագից առաջ նա իր մեղքերը քահանային խոստովանելիս, յիշել էր և այդ օրւայ իր կրած սրտնեղութեան ու տանջանքի մասին, որ պատճառել էր նրան Յովսէփը, իսկ քահանան մեղմօբէն ասել էր նրան։

— Սարգիս աղա, այդքան խստասիրտ չըպէտք է լինել, ինդ է Յովսէփը, նա բարի մարդ է, նա ոչոքի փողը չի ուտիլ. այդ փողերն էլ նա չի շուայել, իսկ եթէ դժբախտութիւնների մէջ ընկնելով ստիպւած է եղել ծախսելու հիւանդների և ընտանիքի վրայ, միթէ դրանում նա մեղաւոր է։ Հասպա ի՞նչ կարող էր անել մի հայր, որի հիւանդ զաւակը կարօտ է եղել օգնութեան, դրա հետ միասին ընտանիքն էլ իր ապրուստն է ուղում, իսկ շուկայի գործը դըքբախտաբար անյաջող է գնում։ Խնայիք նրան, Սարգիս աղա, գարձեալ ժամանակ տուր։ Այսպիսի աղիք օրը վշտացնելով նրանց, դու մեծ յանցանք ես գործել, խոստացիր այլ ևս չըկրկնել այդպէս»։

Սարգիս աղին, ի հարկէ, դուր չէին եկել քահանայի այդ խօսքերը. բայց նա այժմ եկեղեցում կանգնած մտածում էր, որ ճիշտ էր ասում նա։

Յանկարծ մի փոքրիկ իրարանցում ընկաւ եկեղեցում. մարդիկ սկսեցին խաչակնքել երեխաներին։ Մանկական մի պարզ ու զիլ ձայն բարձր երգում էր.

«Քրիստոն յարեաւ ի մեռելո՞ց...»

Այնքան ազգու և ցնցող էր այդ ձայնը, կարծես երգում էր մի անմեղ հրեշտակ։ Մարդիկ փշաբաղւում էին այդ զմայլիչ ձայնից, որը սարսոկեցնում ու սթափեցնում էր նըրանց. ոմանք մինչեւ իսկ արտաստում էին։ Միամիտ ու անարտ մանուկը աւետիր էր տալիս մարդկանց Փրկչի յարութեան, ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակի մասին և այդ ժամանակ մարդկանց վրայ ազգում էին որ-



քան խօսքերը, նոյնքան էլ երեխայի արծաթահնչիւն ձայնը և նրա երգելու եղանակը:

Եետոյ, երբ անցաւ հիազմայլման առաջին ըովէն, մարդիկ սկսեցին կամաց շշնջալ միմեանց ականջին: Մէկը հարցնում էր.

—Ո՞վ է այդ երգող երեխան, ապրի, ի՞նչ հիանալի ձայն ունի. ինչքան լու է երգում:

Իսկ միւսը պատասխանում էր.

—Խանութպան Յովսէփի որդին է. շատ շնորհալի երեխայ է, բայց ինչ արած որ անբախտ է: Սրա հօք գործերը շատ վատ են գնում: անյաջողութիւնները պատել են խեղճին. հիւանդութիւնները նրա տնից չեն վերջանում. առուտուրը խանգարւել է. պարտատէրն էլ միւս կողմից է խեղդում: Գոնէ երեխան խելօք լինի, այդ էլ մխիթարութիւն է:

Սարգիս աղէն, որ ինքն էլ հիացած էր երեխայի երգից, լսում էր երկու խօսակիցների այդ խօսքերը և զգում, որ դրանք իրան էլ են վերաբերում, թէս խօսողները չէին նկատել նրան: Նա շփոթւել էր. քրտինքը յորդ կաթիլներով առատ գլորում էր նրա ճակատից և ողողում նրա դէմքը: Այդ բոպէին նրա հոգու մէջ մի փոփոխութիւն էր կատարւում. մի մեծ ու հիմնական փոփոխութիւն... նրա մէջ ըսկում էր խօսել արդարութեան վաղուց լուծ ձայնը. Սարգիս աղէն վերակենդանում էր բարոյապէս...

Պատարագն արծակւեց: Սարգիս աղէն ամենից շուտ գուրս եկաւ եկեղեցու բակը և ուշի ուշով դիտում էր եկեղեցուց դուրս եկող երեխաներին. նա փնտում էր մէկին, որին ահա վերջապէս գտաւ: Յովսէփի որդի Սիսակն էր դա, որն իր ցնցող երգով նրա մինչև հոգու խորըն էր թափանցել և զարթեցրել նրա թմրած սիրտը:

Սարգիս աղէն հանեց իր գրպանից թղթի մի ծալած թերթ, — Յովսէփի պարտքի կատարողական թերթը, — և տալով երեխային՝ մեղմ ու փաղաքշական ձայնով ասաց նրան.

—Որգեակ, տար այս թուղթը հայրիկիդ և ասա, որ ես շնորհաւորում եմ նրա Զատիկը և բաշխում իր պարտքը: Երեխան, որ նրան տեսնելուն պէս վախեցել ու շփոթ-

ւել էր, յիշելով մի քանի ժամ առաջ իրանց տանը տեղի ունեցած տեսարանը, սիրտ առաւ տեսնելով, որ այն խստասիրտ ու դաժան մարդը այս անգամ խօսում էր իր հետ այնքան քաղցր ու սիրալի՛ եղանակով: Նա առաւ թուղթը, ժպտաց, զլսի թեթև շարժւածքով կարծես իր շնորհակալութիւնը յայտնեց և վազեց դէպի տուն:

Այդ երեկոյ ուրախութեան տօն էր կատարւում խեղճ Յովսէփի տանը: Յիսուսի սուրբ Յարութեան յիշատակի հետ միասին նա տօնում էր իր ու իր ընտանիքի մեռնող բախտի յարութիւնը. նրանց խորտակւող կեանքի ու ընդ միշտ սեացող ապագայի յարութիւնը...

Սակայն աւելի երջանիկ էր այդ երեկոյ աղէն: Իր 55 ամեայ կեանքի ընթացքում նա երբէք իրան այնպէս գոհ ու բախտաւոր չէր զգացել: Վաղուց էր մեռել ու թաղւել նրա խիղճը. վաղուց էր բարացել ու անզգայացել սիրտը և նրան անյայտ չէր իր բարոյական մահը. իսկ այդ երեկոյ մանկական մի ձայն սթափեցրել էր նրան և նա ներելով իր պարտապանին, զգում էր, որ այդ բոպէից յարութիւն է առել իր հարացած սիրտը, իր մեռած խիղճը... Իր կատարած բարի գործի դիտակցութիւնը այս անգամ երջանիկ էր դարձրել նրան...

ուր թէկ տնտեսապէս շատ աննախանձելի վիճակի մէջ էր և նրա նիւթականը հետզհետէ նւազում էր, սակայն նա ոչինչ չըխնայեց իր աղջկանը կանոնաւոր կրթութիւն տալու համար: Նինան ևս իր կողմից աշխատում էր արդարացնել իր վրայ գրւած յոյսերը և իրանց ուսումնարանում առաջնաշակարգ աշակերտուհիներից մէկն էր: Եօթ տարուց յետոյ նա յաջողութեամբ վերջացրեց ուսման ընթացքը:

Այժմ նա մի համեստ օրիորդ էր դարձել. նախկին շատախօս ու անհանգիստ աղջիկն այժմ հեղութեան ու պարկեցութեան տիպար էր ներկայացնում: Հարաւի կլիման ու ցեղային փարթամութիւնը իրանց ներգործութիւնն էին ունեցել նրա վրայ, այնպէս որ տասն և հինգամեայ հասակում նա աւելի հասունացած էր երեսում, քան թէ հիւսիսային երկրների բանամեայ օրիորդները: Աւելացրէք դրա վըրայ և այն հաղւագիւտ գեղեցկութիւնը, որով բնութիւնը օժանակ էր նրան, այն չքնաղ հասակն ու նազելի շարժւածքները, որ նա գործ էր դնում մի ինքնուրոյն եղանակով, իր աննման աչքերի այն դիւթիչ հայեացքը, վարդագոյն շրթունքներում շարունակ խաղացող այն քաղցր ժպիտը, և այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչու նրա հայրը չընայած իր նիւթապէս աղքատ գրութեամբ, ամեն օր զանազան տեղերից առաջարկութիւններ էր ստանում, որոնք ինդրում էին նրա աղջկայ ձեռքը:

Հարևան կարապետն առաջ բաւական հարուստ էր և գործով յաջողակ: Նա մինչեւ անգամ իրան ընդ միշտ ապահովւած էր համարում նիւթականապէս, երբ վճռեց ամուսնալ: բայց այն օրից, երբ կատարւեց այդ չաբարախտ ամուսնութիւնը, նրա կծիկը յետ տեց: Ժողովուրդն ասում է, ամուսնացողների բախտը կը կապատկւում է, իսկ իսկական կարապետի հետ հակառակը պատահեց: Այն օրից, երբ նրա համար մի կողմից բացւեց ընտանեկան երջանկութեան դուռը, միւս կողմից շուկայում նրա աստղը թեքւեց: Անյաջողութիւններն արագութեամբ յաջորդեցին միմեանց և նրան մինչև սնանկութեամն գուռը հասցրին: Չար լեզուներն ասում էին, որ այդ ամենի պատճառը նրա կինն էր իր շուայլ ու անչափ ժամանակով... Բացի նինայից, նրանը չորս երեխայ էլ ջոկ ու-

Զ Լ Ս Ի Ռ Ե ~ Յ...

Ըս ճանաչում եմ նինային դեռ նրա մանկութիւնից. նա մեր հարեան կարապետի աղջիկն էր: Փոքր ժամանակը նա մի կայտառ, անհանգիստ ու սրամիտ երեխայ էր: Մի բոպէ չէր կարող հանգիստ նստել. պիտի շարունակ իջնէր աթոռից, այս ու այն կողմ վազվէր, յետոյ դարձեալ նստէր, դարձեալ իսկոյն վեր կենար և այսպէս անվերջ: Օրւայ մեծ մասը նա մեր բակում էր անցկացնում, խաղալով մեր երեխաների հետ. նրա տիկինը միշտ ամենից գեղցիկն ու լաւ զարդարածն էր լինում: Մեզ պատահելիս իրանց տանը թէ մեղ մօտ, նա մի առանձին դիւտ արածին ման վազում փաթաթւում էր մեղսով ու մի բոպէում հարիւրաւոր հարցերով պաշարում մեզ: Երբեմն նա այնպիսի բաների մասին էր հարցնում, որոնք ամենեկն չէին հետաքրքրում նրա հասակակից երեխաներին և բարձր էին լինում նրանց խելքից: Շատախօս էր նինան, իսկ մեղ չը անձրացնելու համար նա միշտ իր հարցերը զանազան սըրախօսութիւններով ու կատակներով էր համեմում. բայց մինչոյն ժամանակ մինչեւ իր հարցի պատասխանը չըստանար, նա երբէք չէր հանգստանալ: Շատ անգամ նա թողնում էր իր ընկերակիցներին բակում խաղալիս ու ինքն աննկատելի կերպով մօտենում մեծերին և ուշաղրութեամբ լսում նրանց զրոյցները:

Հարևան կարապետի անդրանիկ զաւակն էր նինան: Ութ տարեկան հասակից նա սկսեց զպրոց յաճախել ու նրա հայ-

նէին, մէկը սիւսից աւելի փոքր և դրանց ամբողջ հոգսը ծանրանում էր նրա վրայ: Աղքատութեան մէջ կարապեան այժմ աւելի թանգ էր գնահատում փողը և այդ պատճառով էլ իսկոյն մերժում էր այն փեսացուներին, որոնք դատարկ գրպանով խնդրում էին նրա աղջկայ ձեռքը, որքան էլ նրանք բարոյապէս բարձր լինէին, որքան էլ նրանք ըստ ամենայնի արժանի լինէին նրա աղջկայ սիրուն: Նապատրաստ էր իր սիրած աղջկանը թէկուզ մի հրէշաւոր մարդու գիրկ նետել, միայն թէ այդ վերջինն ունենար իր պահանջած ցենզը—փողը, փողը, որ կարապեալ կարծիքով միակ աղբիւրն է ընտանեկան բարիքների: Ի՞նչ փոյթ, որ ամուսինները կարող են անհամապատասխան լինել, որ նըրանց սրտում կըբացակայէ մէրը. փողն իր ամենակարողուժով կըմօտեցնէ միմեանց հեռացոներին, կըչերմացնէ սառած սրտերը, նա մոռացնել կըտայ ամեն պակասութիւն: Այդ համոզմունքն էր կազմել հարեան կարապետը և անդառնալի կերպով վճռել էր իր աղջկանն անպատճառ հարուստ մարդու տալ:

Այդպէս անցաւ դարձեալ երեք տարի:

*

Պոլիցիական ծառայող Գէորգ բէզը մէր քաղաքում անյայտ անձնաւորութիւն չէր: Շնորհիւ իր գիրքին ու պաշտօնին, որոնց շնորհած արտօնութիւններից նա մեծ վարպետութեամբ կարողանում էր օգտւել, և իր անսահման ոյժը շատ անգամ ցոյց տալ ում որ ուղում էր: Նա դրանով մեծ հեղինակութիւն էր ձեռք բեռել և ամենքն էլ, թէև ակամայ, յարգանք էին ցոյց տալիս նրան: Պաշտօնը նա կարողանում էր գործ ածել ինչպէս մի զէնք թէ իր անունը բարձրացնելու, որով յագենում էր նրա փառասիրութիւնը, և թէ իր գրպանը հարստացնելու, որով կարճ ժամանակում աշնագին կարողութիւն գիզեց:

Նա այժմ յիսուն տարեկան էր: Մինչեւ այդ հասակը նա երկու անգամ ամուսնացել էր: Երկու կինն էլ երկար չէին ապրել նրա ձեռքում: Չար լեզուները ասում էին, որպէս թէ նա տանջելով սպանել է նրանց: Երկուսից էլ նա ոչ մի զաւակ չունեցաւ: Նրա երիտասարդութեան ընկերները այդ

շատ բնական էին համարում, ի նկատի առնելով այն անսառակ կեանքը, որով նա ապրեց մինչեւ քառասուն տարեկան հասակը, երբ վերջապէս ուժապառ եղած վճռեց ամուսնանալ: սակը, երբ վերջապէս ուժապառ եղած վճռեց ամուսնանալ: երկու կին թաղելուց յետոյ, նա որոնում էր երբորդ գոհին և այս անգամ նրա ուշադրութիւնը գրաւեց գեղեցիկ նիսան:

Բանակցութիւնները երկար ըլտեցին: Հոգով ու գըրպանով աղքատ կարապետը ցնծութեամբ ընդունեց Գէորգ բէկի ողորմած առաջարկութիւնը: Շուտով կոտարեցաւ ամառագրութիւնը և նոյնպէս շտապով էլ հարսանիքը: Քանչանագրութիւնը և պահանջած ցենզը—փողը, փողը, որ կարապետի կարծիքով միակ աղբիւրն է ընտանեկան բարիքների: Ի՞նչ փոյթ, որ ամուսինները կարող են անհամապատասխան լինել, որ նըրանց սրտում կըբացակայէ մէրը. փողն իր ամենակարողուժով կըմօտեցնէ միմեանց հեռացոներին, կըչերմացնէ սառած սրտերը, նա մոռացնել կըտայ ամեն պակասութիւն: Այդ համոզմունքն էր կազմել հարեան կարապետը և անդառնալի կերպով վճռել էր արտասուրները, խեղդ նիսան ու կղզում շատ աըլից, թագուն շատ արտասուց, փորձեց մինչեւ անգամ հասակակ ծնողներին, պաղատելով չանբախտացնել իբան, բայց նրա յուսահատ լացն ու կոծը ընդինուուր ուղախութեան մէջ իւլացան, ոչ ոք չըլսեց նրան և ստիպւած եղաւ կուլտալ իր արտասուրները, խեղդ նիսան ու լոել: տալ այդ տիրութիւնը, սակայն, շատ կարճաւեկ եղաւ: Հանրա այդ տիրութիւնը, սակայն, շատ կարճաւեկ եղաւ: Հանրա կը անցել երկու ամիս նրա ամուսնութիւնից, որ նա կարծես բոլորովին մոռացաւ տիրութիւնը, հաշտեց իր վիճակի հետ և մինչեւ անգամ սկսեց ուրախ երեալ:

«Նա մոռացաւ իր ցնորքները և զգում էր իր կատարեալ երջանկութիւնը», — ասում էին բարեկամները:

«Ի՞նչպէս չի ուրախանալ, բախտաւուրը, այնքան ոսկու և արծաթի մէջ»: — նախանձում էին հարեանները:

«Ենելը զնում է իր քաւթառ ծերուկի վրայ, երեսում է սաստիկ է սիրում նրան»: — ծաղբելով բամբասում էին նրան իր հասակակից օրիորդները:

*

Երկու տարի էր անցել այն օրից:

Այժմ Գէորգ բէզը այլնս առաջւայ անսահման իշխանաւորը չէր: Նրա գործած անթիւ զեղծումներն ու կաշառակերութիւնն անպատիժ չըմացին: Հարստահարւածների աղաղակները վերջապէս լսելի եղան և նա դատի կանչելով պաշտօնանկ եղաւ ու վեց ամիս բանտարկելուց յետոյ ար-

ձակւեց: Կորցրած փառքը, կրած նախատինքը, թէ մի ուրիշ նեղքին վիշտ շարունակ տանջում էր նրան և նախկին հպարտու անհոգ Գէորգ բէզը այժմ բոլորովին մռայլ ու լուռ բնաւորութիւն էր ստացել: Ֆիզիքապէս ու բարոյապէս նա բոլորովին ջարգել, բայց և միևնոյն ժամանակ խիստ կասկածու ու դաժան էր դարձել դէպի իր կինը, ծառաները: Դրսում անարգանք կրելով, իր մաղձը նրանց վրայ էր թափում: Նրա տանը վաղուց վերջացել էին ուրախ խօսակցութիւնները, շարունակ կուի էր, հայեցանք և ծեծ: Ամբողջ աշխարհը սեացել էր նրա աչքին և նա ոչ մի տեղ հանգըստութիւն չէր զգում: Դուրսը չունէր նա ոչ մի սրտացաւ բարեկամ, որ միիթարէր նրան, իսկ տանը նա միշտ պատահում էր իր կոչոյ սառն ու անտարերեր հայեացքին. կոչոյ, ուր ամենափռքը չափով անգամ չէր բաժանում նրա վիշտը: Եւ իսկապէս ի՞նչ հոգ Նինային թէ նրա մարդը խայտառակունի, որոնք ապահովում են նրանց ապագան ու ապրուստը և մի՞թէ հաջարաւոր անգամ նա չի լսել իր հօրից, որ ընտանեկան երջանկութիւնը միմիայն ոսկու քանակութիւնից է կախւած: Սակայն նրա անտարերերութիւնը չափազանցութեան էր հասնում... Գէորգ բէզին մինչև անգամ թւում էր, որ իր վիշտը մի առանձին ուրախութիւն էր պատճառում իր կոչը և զրա համար էլ նա միշտ աւելի ու աւելի էր կատաղում նրա վրայ: Այդ բոլորը բաւական չէին, անողոր ճակատագիրը մի աւելի սոսկալի խոր էր պատրաստել նրա գլխին: Նա դեռ մի այնպիսի վիշտ ևս պիտի կրէր, որը պիտի գերազանցէր բոլորին, պիտի մոռացնել տար ամենը:

* *

Մի օր Գէորգ բէզը սովորականից շուտ փողոցից տուն վերաբարձաւ: Այն ժամանակ երբ քաղաքային այգու մի խոր անկիւնում մենակ նստած իր տխուր մտքերին էր անձնատուր եղել, յանկարծ մի խիստ գլխացաւ շամփրեց նըրան և նա վերկենալով շտապից դէպի տուն պարկելու: Հասնելով բակի դռանը՝ նա ներսից փակ գտաւ: Ուզեց բաղիսել դուռը, բայց իսկոյն կաթես մի բան ընկաւ նրա միտքը և ձեռքը յետ քաշեց: Կասկածի մի թունաւոր օձ խայթեց նրա

միրտը և նա, մոռանալով իր գլխացաւը, սկսեց կամաց դիտել լուսամուտներից դէպի ներս և ականջ դնել ամեն մի անկիւնում, բայց ոչինչ չընկատեց: Դարձեալ ուզեց բախել, կրկին փոշմանեց և գլուխը քաշ ձգած անցաւ տան միւս կողմը, որտեղ վերջանում էր պարտէզը և պատը քանդուած լինելով՝ ճանապարհ էր բացւել: Առանց ձայն հանելու նա մտաւ պարտէզը և դիմեց ուզեց դէպի տուն:

Դէպի պարտէզ բացւեղ տան դուռը կիսով չափ բաց էր. Գէորգ բէզը կամաց մօտեցաւ ու ներս նայեց: Նրա աշը բառաջ բացւեց մի տեսարան, որից նա թէ սարսուց և թէ կատաղեց, այնքան դա անսպասելի, այնքան անհաւատալի էր նա տեսաւ իր կոչը—Նինային—հերարձակ, կիսով չափ բաց կուրծքով, կանդնած սենեակի մէջ տեղը. նա իր զգիւում սեղմել էր մի տղամարդի և ի՞նչ սէրաբուրով համբոյներ էր թափում նրա վրայ: Գէորգ բէզի աչքերը սեացան, նա չէր հաւատում իր տեսածին. նա տրորեց իր աչքերը և նորից սկսեց նայել. դարձեալ նոյն բանը... Սիրահար զոյգը անդուսպ սիրոյ ինքնամուացութեան մէջ էր. Նրանք չէին մտածում, որ տան դուռը բաց է և մէկը կարող է ականատես լինել իրանց թագուն գործին: Գէորգ բէզն ուզում էր առաջ գնալ, ոտքերը չէին հսազանդում, ուզում էր գոռալ—կոկորդն էր փակւում, իսկ այդ անտանելի դրութեան մէջ նա ուզում էր տեսնել այդ ամենը մինչեւ... վերջը: Կատաղութիւնը չէր խանգարում նրան այդ բոսկէին դիտել Նինայի գեղեցկութիւնը: Այդ կիսամեռէլ զրութեան մէջ նա այժմ այնքան հրաշալի էր, ինչպէս չի եղել ոչ մի ժամանակ: Ի՞նչ անզուսպ անսահման կիբը էին արտայայտում նրա վառած աչքերը. ի՞նչ տաք համբոյներ էին թափում նրա այրադ շրթունքները. նրան թւում էր, որ Նինան երբէք այնքան անհման չէ եղած... Գէորգ բէզը և բարկանում և նախանձում էր այն մարդուն, որն արժանացել էր այդ հըրեշտակի բարեհած սիրուն. իսկ ինքը, ինքը փողով գնեց այդ աղջկան իր տխմար ծնողներից. նա ստացաւ նրա ձեռքը, իսկ սիրտը ստանալ չէր կարողացել: Նա այժմ էր հասկանում, որ այդ սիրով լի աչքերը միայն ծաղրել են իրան և այդ նազելի շրթունքները միայն խարել... Բայց ո՞վ էր

այժմ նրա գրկում, սիրոյ անվերջ զեղման մէջ արբեցած բախտաւորը: Նրա շորերը մի տեսակ ծանօթ էին թւում Գէորգ բէզին, նա յաճախ էր տեսել մէկին այդ շորերով, իսկ այժմ նրա միտքը շփոթւել էր և նա չէր յիշում թէ ում հագին է տեսել. նա ուզում էր տեսնել այդ մարդու դէմքը, որն այժմ թաղւած էր Նինայի հարուստ կրծքի մէջ:

Վերջապէս տղամարդն ազատեց իր գլուխը Նինայի գրկից, բնքշութեամբ գրկեց նրան ու տարաւ նստեցրեց պատի մօտ գրւած բազմոցի վրայ և ինքն էլ նրա կողքին նստելով՝ նրա ձեռքն առաւ իր ափերի մէջ: Գէորգ բէզը ցնցւեց, տեսնելով այն մարդու դէմքը. Նրա կնոջ տարիածուն իրանց հարկան երիտասարդ արհեստաւոր Յովակիմն էր: Բարկութիւնից Գէորգ բէզի շունչը կտրւեց. մի խուլ մոնչիւնով նա ներս ընկաւ սենեակ և բարձրացրեց իր ձեռնափայտը նրանց խըփելու: Մի վայրկեանում Յովակիմը դուրս փախաւ սենեակից ու անյայտացաւ: Տանը մնացին երկուսով—մարդ ու կին: Մարդը ճիզ էր թափում կնոջ ձեռքից խլել իր փայտը և խիել նրան, իսկ կինը ամուր բռնած փայտի ծայրից բաց չէր թողնում: Այսպէս մի քանի ըոսէ նրանք քաշը շուրջում էին միմեանց. ոչ մէկը միւսին չէր կարողանում յաղթել: Վերջապէս մարդը յուսահատելով բաց թողեց փայտը կնոջ ձեռքում և ինքն շտապով մտաւ իր ննջարանը: Գնաց, իսկոյն պատից ցած բերեց գէնքերի կողքին կախած փոքրիկ կեռ դաշոյնը և, պատեանից հանելով, վերագրածաւ այն սենեակը, որտեղ գեռ յոյս ունէր գտնել իր կնոջը: Սակայն նա մնաց ապշած. Նինան անյայտացել էր: Նա վաղեց գէալի պարտէզ, այնտեղ ևս չըգտաւ նրան: Դէպի փողոց տանող դուրը այս անգամ բաց էր..,

Երբ Գէորգ բէզը մտել էր ննջարանը, Նինան հասկանալով նրա մտադրութիւնը, իսկոյն շալը գլխին ծածկելով, դուրս էր փախել տանից և գնացել ուղիղ իր հօր տունը:

**

Ոչ մի տեղ չըգտնելով Նինային և ներքնատների ամենախուլ անկիւններն էլ իգուր որոնելուց յետոյ, նա նոյն վրդովւած զրութեան մէջ նորից վերագրածաւ այն սենեակը, որտեղ մի բոպէ առաջ ինքն ականատես էր եղել իր համար

այնքան անպատւարել տեսարանին: Գլուխը կորցրած և չի-մանալով ինչ անել, նա արագ քայլերով անզիտակցաբարա-չափում էր սենեակի երկայնութիւնը: Մինչև անզգայութեան էր հասել և չը կարողանալով ոչ մի հաշիւ տալ ինքն իրան, նա երեմն իր կրծքին էր մօտեցնում իր ձեռքում սեղմած մերկ գաշոյնի ծայրը և նորից ցնցւելով յետ տանում: Մի բոպէ կեանը կորցնում էր նրա աչքում իր բոլոր արժեքը և նա ուզում էր ինքնասպանութեամբ վերջ տալ: Նրան: Դըր-սի խայտառականութիւնը բաւական չէր, ներսում էլ նրա ընտանեկան սրբութիւնն էր պղծւած: Նա հասկանում էր իր ամբախտութեան ամբողջ մեծութիւնը, բայց երբ դաշոյնի սուր ծայրը ծակելով նրա շորերը դիպչում էր մարմնին, նա նորից փոխում էր իր մտադրութիւնը և սկսում էր ու-րիշ կերպ մտածել: Միթէ ինքնասպանութեամբ նա կարող էր սրբել այն անջնջելի արատը, որի միակ պատճառը նրա կարծիքով էր կինն էր. և ինչու չապրել թէկուզ հէնց նրան պատժելու համար: Գերեզմանում անգամ նա էլ նանզիստ չէր կարող լինել քանի որ իր վրէժը չէր հանել նրանից: Նա դէն ձկեց գաշոյնը սեղանի վրայ և վճռեց առանց աղ-մուկի սպասել մինչեւ իր տունը կըլիրազանար Նինան, իսկ այնուհետև նա իր անելիքը գիտէր...

Բայց Նինան գեռ շարունակում էր մնալ իր հօր տանը: Մի անգամ դուրս գալով իր տանից, նա այլ նո ոչ մի կերպ չէր ուզում վերագրանալ այնտեղ, որն իւր բոլոր հարմա-րութիւններով ու փարթամութեամբ հանգերձ նրան թւում էր ինչպէս մի քանտ, մի գժոխք: Առաջ գեռ նա կարողա-նում էր մի կերպ յարմարել այն կեանքին, քանի որ կա-րողանում էր կեղծել—սուտ սէր ցոյց տալ և խաբել իր մար-դուն, այն ինչ իր գաղտնիքի վարագոյրը պատռելուց յետոյ, նրան այլ ևս անհնարին էր թւում ապրել իր մարդու հետ: Նինան և ատում էր նրան իր ամբողջ հոգով և սարսափում էր նրանից, որն ամեն եղեննագործութեան ընզունակ էր:

Այդպէս անցան չորս, հինգ օրեր: Նինան գեռ չէր վե-րագրանում: Գէորգ բէզն սկսում էր քիչ քիչ անհանգստանալ: Ի՞նչ: Միթէ իր կինը վճռել է լնդմիշտ հեռանալ նրանից: Այդ միտքը խիստ վախեցնում էր նրան: Երբենախկին դուռ

Հրաժանատար, ամեն փառքից զրկելուց յետոյ, նրա համար իր սեպհական արժանապատութիւնը, իր անձնական հպարտութիւնն ամենից թանգ էր այժմ։ Նա թէկուղ պատրաստ էր տան մէջ ամեն տեսակ նախատինք տանելու, միայն թէ գրում այդ բանը չիմանային իր ծանօթները, հարկանները, թշնամիները. դրան նա զիմանալ չէր կարող։ Իսկ եթէ կիւնը չը վերադառնար, եթէ իր նախատինքն յայտնւէր աշխարհին, այն ժամանակ... Այդ հարցի պատասխանը չէր գրում նա և ձեռքբրով ամուր բռնում էր իր գլուխը, որը կարծես ուզում էր տրաքւել տխուր մտքերի կուտակումից։ Երբեմն նա մոտածում էր գտնել այն պատճառները, որոնք դրդել էին իր կնոջն ամօթալի քայլն անելու և այդ ժամանակ նա այսպէս էր խօսում ինքն իրան. «Ռ'չ, կինը իր կամքով պէտք է սիրէ մարդուն, այլապէս ոչ մի միջոցով չէ կարելի նրան հարկադրել այդ բանն անհլու։ Այդ տխուր ձշմարտութիւնը նոր էր հասկանում Գէորգ բէգը։

Վեցերորդ օրը Գէորգ բէգի անհանգստութիւնն ու անհամբերութիւնը իրանց գագաթնակէտին հասան։ Նա իր տուն կանչեց իր աներոջը—կարապետին և կողիտ խօսքերով հրամայեց իսկոյն հետ ուղարկել նինային, սպառնալով, որ հակառակ դէպքում իր սրտի ամբողջ մաղձը նրա զլիկն կը թափէ և նա խիստ կըստուժէ իր անսուակ աղջկայ փոխարէն։

Հարևան կարապետն իր գլուխը կորցրել էր։ Մի ամբողջ շաբաթ նրանք, մարդ ու կին աշխատել էին ծածուկ խրատել իրանց աղջկանը, համոզելով վերադառնալ իր մարդու մօտ, հաւատարիմ լինել նրան և աշխարհի առաջ ծաղը ու ծանակ չըդառնալ։ Շատ էին նրան յանդիմանել և շատ արտասել ու աղջէել, որ խնայի նրանց թշւառութիւնը, բայց նա անողոք էր մնացել։ «Չեմ կարող սիրել նրան, — այս էր եղել նինայի վերջնական պատասխանը, — գուք անզոթաքար վաճառեցիքինձ մի փողաւոր գազանի և այժմ ինք ներդ տուժեցէք ձեր մեղքը։»

Կարապետի ամենամօտ բարեկամը մենք էինք և նա իր վիշտը ամենից առաջ մեզ յայտնեց, ինդրելով մեր միջամտութիւնը, մի կերպ վերջ դնելու իր ընտանեկան արդ

անելանելի գրութեանը։ Հետևեալ օրը մենք նրանց տաննե էինք։

Նինան տիրուր ու ջարգւած էր երեսում։ Որքան փոխաւել էր նա։ Նու նմանում էր անկողինը նոր թողած հիւսնդի։ Նախկին շատախօս ու վարվոռն աղջիկը այժմ խիստ լուրջ և մտախոն էր դարձել և խօսում էր գժւարութեամբ կարճ ու կարծես ակամայից։ Նրան յայտնի էր մեր ալցելութեան նըսպատակը և երբ խօսակցութեան մէջ կարապետը վերջապէս ակնարկեց նրա ամօթալի արարքի մասին, նա ամենեին չաշխատեց էլ ուրանալ։ Ինչ որ ճիշտ էր, նա չէր թագցնում։

Բայց ի՞նչպէս կարող է այդպիսի բան թոյլ տալ իրան նահապետական ընտանիքում մեծացած մի աղջիկ, — ասում էր կարապետը յուզմունքից դողալով, — ի՞նչպէս կարող է նա իր կամքով իրան այդպիսի անպատւութեան ցեխի մէջ գլորել։

Դրա պատճառները հին են, — ասաց վերջապէս Նինան, բոլորովին անվրդով եղանակով։ Միթէ դուք չեք յիշում, որ Գէորգ բէգը բոլորովին պառաւած և ուժասպատ մի ծերունի էր, երբ նա ինդրեց իմ ձեռքը։ Դուք գիտէիք նոյնպէս թէ նա ինչ անցեալ է ունեցել, սակայն չըմերժեցիք նրա առաջարկութիւնը, որովհետև նա աստիճանաւոր էր, ամենքին կարող էր հարամայել, իսկ այդպիսի փեսայ ունենալն էր միակ տենչանքը։ Առաջին անգամն նրան տեսնելուց, բայց հչ, գետ չըտեսած անգամ, ես սկսեցի ատել նրան։ Մեր հարսանիքից մի քանի օր առաջ մի անգամ նըրա հետ մենակ մասով սենեակում, ես աղաչեցի նրան թողնել ինձ, ես արտասեցի, համբուրեցի նրա ձեռքերը։ Խոստացայ յափտեան երախտագէտ լինել նրան դրա համար, բայց նա անտարբեր մնաց։ Վերջապէս յուսահատւած՝ ես խոստովանեցի նրան, թէ իմ սիրու ուրիշի է պատկանում, և սպառնացի, որ երբէք չեմ սիրելու նրան։ Նա միայն ծիծաղում էր, իմ տանջանքը մի առանձին բաւականութիւն էր պատճառում նրան և նա հրճում էր այնպէս, ինչպէս ուրախանում է կատուն, իր ճանկերում սեղմած ճնճղուկի յուսահատ ծւծոցը լսելով։ Այդ վերջին միջոցն էր, որին ետ-

քիմում էի, որովհետեւ ձեզ ևս չէին շարժել իմ պաղատանքը՝ ներս ու արտասուբներս: Այնուհետեւ ինձ երկու բան էր մտում անել, կամ ինքնասպանութեամբ վերջ տալ կեանքի՞ս, կամ առերս համաձայնել և յետոյ թագուն վրէժինդիք լինել: Առաջինը ես չէի կարող անել, որովհետեւ անձնասպան լինելու քաջութիւն չունէի և մինոյն ժամանակ այդ բանը անօգուտ էի համարում: Միթէ մեռնելով ես կարող էի որևէ նպատակի համեմնել, ես դեռ նոր էի հասկանում կեանքը. ես ուզում էի ապրել... Ես ընտրեցի երկրորդ ճանապարհը և մենք պատակւեցինք: Ինչպէս և սպառում էի, նրա սիրոք բոլորովին ամայի գտայ սիրուց: այնտեղ կար միայն վավաշու կրքի հիւանդու տականքը... Նրա սրտում առժամանակ նորից բորբոքեց կիրքը, շուտով ընդմիշտ հանգչելու համար... Բայց ես սէր էի որոնում. առանց սիրոյ ես ապրել չէի կարող, նա ինձ համար կենսական պահանջ էր: Եւ ես սկսեցի սիրել ուրիշին... Միակ բանը այնուհետեւ, որը ինձ համար ծանր էր, որն ինձ ճնշում, անհանգստացնում էր, այդ այն էր, որ ես ստիպւած էի տառելով հանգերձ կեղծ սէր ցոյց տալ նրան և միշտ սպասել որ ահա այսօր կամ վաղը նա կիմանայ ամեն ինչ և կը բացւի իմ դիմակը... Իսկ ես միամտաբար կարծում էի, որ նա այնքան երկար չի ապրիլ և ես վերջապէս կազմաւեմ այդ ինձ համար անտանելի կապից: Չէ որ հայրս միշտ ասում էր, թէ երջանկութիւնը միայն փողի մէջն է և ես էլ համոզւած էի, որ Գէորգ բէզի մեռնելով ես ամենակին չէի դժբախտանալ: Սակայն նա չժեռաւ, նրան դեռ վիճակւած էր իր անգութ արարքի պատիմը կրել... Այժմ իմ և նրա մէջ ամեն ինչ վերջացած է...

— Բայց ինչ կասեն մարդիկ այդ բանն իմանալով,— աշխատում էինք խրատել նրան.— չէ՞ որ ամենքն էլ կը ծալլին ու կը բարձրասեն ձեզ. չէ՞ որ հասարկութիւնը կը խորշէ ձեզնից:

— Ինձ ինչ նրանց ծալլրը կամ բամբասանքները,— պատասխանեց Նինան հետզհետէ տաքանալով:— Միթէ նրանք չըբամբասեցին այն ժամանակ, երբ մի ջանիկ աղջկի անգիտաքար այն ծերուկին յանձնեցին, սակայն ինչ օգուտ եղաւ դը-

րանից. Խօսեցին, վրդովւած ձևացան և լոեցին: Նրանք միայն խօսել գիտեն... Միթէ նրանք որևէ միջոց գործ դրին, որ այլ ևս չըկրկնելու նման գէպքեր: Անբախտացողների մէջ ես ոչ առաջինն էի, ոչ էլ վերջինը եղայ: Իինում էին օրինակներ, երբ աղջիկը իր չըսիրած տղամարդից ազատւելու համար ինքնասպանութեամբ էր վերջացնում ամեն հարց: Այն ժամանակ էլ մի երկու օր միայն խօսում էին, վրդովւում և լուս: Բայց թշրւացածների ամենամեծ մասը լուս խոնարհում է իր ճակատագրին, ոչըրը և ուրախութիւնը մեռնում են նրա սրտում և տեղի տալիք մի վհատւած ու անձայն ստրկութեան: Վերջապէս լինում են նրանց մէջ և այնպիսիք, որոնք թէն խոնարհած բռնի ոյժի առաջ, սակայն կարողանում են միշտ վլէժինդիր լինել, իրանց ուղածը կատարել և այս գէպքում նրանք անյաղթելի են... Եւ առացէք, միթէ գա բնական չէ: Ի՞նչ համերաշխութիւն, ի՞նչ սէր կարող է լինել երկու անհատների մէջ, որոնցից մէկի սրտում նոր վառուում է սէրը, իսկ միւսի սրտում նա վաղուց հանգել է, որոնցից մէկը նորաբողբոջ գարուն է մտնում, իսկ միւսն իր աշխանային գեղնած տերեներն է թափում: Որոնցից մէկի սիրտը երջանիկ ապազայի վառ յոյսերով է բարախում, իսկ միւսի խանգարւած երեսակայութեան առջեւից գերեզմանի մուայլ ստւերներն են անցնում... Միթէ երբ և է ծնողները խստապահանջ եղան, որ ամուսնացողներն գիկապէս ու հոգեպէս համապատասխան լինեն միմեանց, որ անպատճառ փոխազարձ մէրը միացնէ նրանց: Երբէք: Անձնական հաշիւները և փեսայի կամ հարսի շատ ու քիչ ապահոված նիւթական գրութիւնն է միշտ եղել նրանց բախտը որոշողը: Եւ քանի որ աղջկայ ձայնը միշտ խեղգւած կը լինի լոկ իր ծնողների քամհաճոյքից ու նրանց հաշիւներից և նա ինչպէս անշունչ առարկայ կը վաճառւի, միշտ ցաւալի գէպքերը, ընտանեկան անվերջ երկպառակութիւններն անպակաս կը լինեն: Օրինակներն անթիւ են և նոյն իսկ շատ մօտ: Ի՞նչ բարոյական կապ կարող էր լինել իմ և Գէորգ բէզի մէջ: Մեր երկամեայ կեանքն ինձ համար մի սոսկալի մարտիրոսութիւն էր միայն և այժմ ես շատ ուրախ եմ, որ վերջապէս ազատւեցայ նրանից:

Մեր բոլոր յորդորներն ու խրատները իդուք անցան.
Նիսան հաստատ մնաց իր որոշման մէջ... Վերջին անգամ
էլ նա կրկնեց, «անկարելի է, չեմ կարող սիրել նրան»:

* *

Մի քանի օրից յետոյ լսեցինք Գէորգ բէզի անակնկալ
մահը. նա կաթւած էր ստացել և յանկարծամահ եղել. Այդ
մահն աղատեց նրան խայտառակութիւնից ու տանջանքնե-
րեց, իսկ Նիսային և մանաւանդ նրա ծնողներին անտանելի
ծանր դրութիւնից... Մահը շատ հեշտութեամբ լուծեց այն
բարդ ինդիրը, որին վճռել էր ուզում Նիսան իր տանջանք-
ների և մինչև իսկ իր կեանքի զոհաբերութեան գնով:

Վ Ե Բ Զ

ՀՀ Ազգային գրադարան



NL0350805



Գումարով գնողներին՝ թիֆլիզում 25% զեղջ, իսկ
թիֆլիզում 20% , ճանապարհածախոլ մեր հաշվին:
Դիմել՝ Տիֆլիս, ~~Վանաձոր~~
~~Տուլուս~~ Գևорկ Բաբորյանց.
Օքրոկամսկաձ, 9,